

աղանդոյն համար՝ թէ «ի տէրունի սեղանն իցէ» (Գոշ՝ Առկ. 99). եւ որ ուղղակի առ Աստուած նուիրման ձեւ մը կը թուի, ինչպէս հին զոհերն ալ սեղանի վրայ կ'այրէին:

7. — Օրհնութիւն սեղանոյ: — Տեառնականին յատուկ, այս ինքն իւր գաղափարին իսկապէս համաձայն սեղանօրհնէք մը չկար նախնեաց մէջ: Անոր համար հոգեհանգստեան սեպհական կանոնը հոս ալ կը պաշտէին, ինչպէս յայտնի է եւ ըիցագոյն Մաշտոցին մէջ ազոր վերնագրէն. «Աւրհնութիւն սեղանոյ տեառնականի եւ պատարագի». եւ զոր տեսնելու ենք իւր բնիկ տեղւոյն մէջ:

8. — Ճաշակումն: — Այսուհետեւ հոն սրբայրին մօտ իսկ, բացօթեայ կամ ընդ յարկաւ ըստ օղին, եւ ափ յափոյ պատրաստուած սեղաններու շուրջը «բազմեցուցեալ դասս դասս զբազմութիւն մարդկանն՝» որ ուխտի եկած էին, կը բաշխէին անոնց մատաղէն, ինչպէս ըրաւ Վարդ ոշտունի Վարագայ ուխտին մէջ (Հյպտ. 231), թէ մսեղէն լինէր անոր նիւթը, եւ թէ ընդեղէն՝ ինչպէս հասկանալու ենք «պահոց եւ ծոմոց ուխտերը» Սահակայ կանոնաց մէջ (111):